



«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ  
01.01.2019 - 31.03.2019թթ.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ5)**

**Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն**

«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1996թ.-ին: Ընկերությունը տրամադրում է ոչ կյանքի ապահովագրությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում գտնվող գրասենյակում՝ Վ. Սարգսյան 10/110 հասցեում:

Ընկերության բաժնեմասերի 60%-ը պատկանում է Լևոն Քոչարյանին (ՀՀ, ք. Երևան, Չորափի փողոց 72ա), 40%-ը՝ Վահագն Խաչատրյանին (ՀՀ, ք. Երևան, Մանթաշյան փողոց, շ 51, բ ն.38):

Ընկերության կորպորատիվ կառավարման գործընթացը ավարտվել է, Ընկերությունում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքները: 31.03.2019թ-ի դրությամբ ընկերությունն ունի 3 անդամից բաղկացած խորհուրդ: Ընկերության կողմից հստակ տարանջատված են ընկերության խորհրդի, գործադիր մարմնի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Ընկերությունում ձևավորված է ներքին աուդիտի ստորաբաժանում:

Ընկերությունը ՀՀ տարածքում ունի 1 մասնաճյուղ:

31.03.2019թ-ի դրությամբ Ընկերությունն ունի 238 ապահովագրական գործակալ և 218 աշխատակից:

**Ծանոթագրություն 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ**

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

Հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ դրամն է:

Ներկայացված գումարները կլորացված են հազար դրամով:

**Ծանոթագրություն 3 . Հաշվապահական հաշվառման գնահատականներ և դատողություններ**

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով փոփոխման ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա կամ փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

**Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփում**

**Ապահովագրության պայմանագրեր**

Ապահովագրության Պայմանագիրը պայմանագիր է, ըստ որի՝ կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա:

Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ուժի մեջ մտած ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես եկամուտ:

**Վերաապահովագրական ակտիվներ**

Ընկերությունը ստանձնած ռիսկերի գծով վնասները ծածկելու նպատակով վերաապահովագրում է իր կողմից ապահովագրած ռիսկերը:

Վերաապահովագրական պայմանագրերից ծագող ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապատասխան ապահովագրության պայմանագրերից ծագած ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի դիմաց:

Վերաապահովագրական պայմանագրերով սահմանված գումարները հաշվառվում են ապահովագրական պայմանագրերի հաշվառման սկզբունքներին համապատասխան: Վերաապահովագրավճարի գծով ծախսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, երբ փոխանցվում է վերաապահովագրված ռիսկը: Փոխանցված վերաապահովագրավճարների չծախսագրված մասը ներառվում է վերաապահովագրական ակտիվներում: Վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ պայմանագրի պայմաններով իրեն հասանելի բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք: Եթե վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է, ապա Ընկերությունը նվազեցնում է դրա հաշվեկշռային արժեքը և արժեզրկումից կորուստը ճանաչում է շահույթում կամ վնասում:

**Ոչ նյութական ակտիվներ**

Ընկերության կողմից ձեռք բերվող ոչ նյութական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

**Հիմնական միջոցներ**

Ընկերության հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձնման ամսաթվից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հետևյալներն են՝

<i>Շենք-շինություններ</i>	<i>20 տարի</i>
<i>տնտեսական գույք</i>	<i>5 տարի</i>
<i>հաշվողական և համակարգչային սարքավորումներ</i>	<i>1 տարի</i>
<i>տրանսպորտային միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>այլ հիմնական միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>մինչև հիսուն հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ</i>	<i>1 տարի</i>

**Արտարժույթ**

Արտարժույթով գործարքները տեղի ունենալու պահին գրանցվում են ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները պներկայացվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

**Հարկեր (ընթացիկ և հետաձգված)**

Հարկի գծով ծախսը (հարկի գծով եկամուտը)՝ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով շահութահարկի դրույքաչափը, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկեր ճանաչվում են կապված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և դրանց հարկային բազայի միջև եղած տարբերություններից:

Շահութահարկը ճանաչվում է շահույթ/վնասում:

Հակերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք ճանաչված են՝ ա/ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բ/ ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են սեփական կապիտալում:

**Քաժմնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ**

Ընկերության սեփականատերերին բաշխումներ ճանաչված շահաբաժինների գումարը արտացոլվում է սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում:

**Ֆինանսական գործիքներ**

Ընկերության ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրության գծով դեբիտորական պարտքերը, այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ներդրումները, պահովագրության գծով և այլ կրեդիտորական պարտքերը, այլ պարտավորությունները:

**Ֆինանսական ակտիվների ճանաչում, չափում**

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այլ անձանց:

Ֆինանսական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով, բացառությամբ՝ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների, որոնք ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գնանշումների հիման վրա:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացվող արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացվող արժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկված է: Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ամորտիզացված արժեքով հաշվառվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով զեղչված ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթ/վնասում:

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ռեզիդենտ բանկերում ներդրված դրամական միջոցները: Ընկերությունը օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցներ չունի:

**Այլ ֆինանսական պարտավորություններ**

Այլ ֆինանսական պարտավորությունները Ընկերության կողմից վճարման ենթակա գումարներն են, որոնք առաջանում են կրեդիտորներից ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու հետևանքով:

Պարտավորությունը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ:

Կրեդիտորական պարտքը սկզբնապես ճանաչվում է սկզբնական /հաշվում նշված/ արժեքով:

Կազմակերպությունը պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հեռացնի ֆինանսական պարտավորությունը այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

**Պահուստներ**

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է:

Պահուստը պետք է ճանաչվի, երբ՝ կազմակերպությունն ունի ներկա պարտականություն որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանավատորեն գնահատել:

Ապահովագրական պահուստները ձևավորվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված իրավական ակտերի, ինչպես նաև ՖՀՄՄ 4-ի պահանջների համաձայն:

**Աշխատակիցներին հատուցումներ**

Աշխատակիցներին հատուցումները ներառում են մասնավորապես աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները, ինչպիսիք են աշխատավարձը, սոցիալական ապահովության մասհանումը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները, տարեկան արձակուրդները, ինչպես նաև ազատման նպաստները:

Աշխատակիցների հատուցումները ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, երբ աշխատակիցները մատուցում են իրենց ծառայությունը Ընկերությանը:

Ընկերությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների բացակայությունները տարբեր պատճառներով, ինչպիսիք են արձակուրդը, անաշխատունակությունը, հիվանդությունը, ծննդաբերությունը:

Կազմակերպությունը պետք է չափի կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները որպես լրացուցիչ գումար, որը կազմակերպությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

**Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում**

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե փոփոխություն է կատարվել հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ, կամ հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին տեղեկատվության ներկայացմանը:

**Ծանոթագրություն 5. Զուտ ապահովագրավճարներ**

ՀՀ դրամ

Ապահովագրության դասեր, որոնց գծով հավաքագրվել է ապահովագրավճար	Համախառն ապահովագրավճարներ		Վերաապահովագրողների փոխանցված ապահովագրավճարներ	
	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	21,891	19,953	(676)	(465)
Առողջության ապահովագրություն	847,884	1,146,659		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	88,015	96,589	(22,163)	(28,578)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	81,128	58,496	(43,742)	(49,361)
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	57,116	91,236	(35,537)	(22,564)
Ավտո պատասխանատվություն	3,697	2,294		(307)
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	17,708	8,411	(8,594)	(2,579)
Ֆինանսական վնասների ապահովագրություն				
Աջակցության ապահովագրություն	10,598	8,161		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	906,081	1,208,722		
<b>Ընդամենը</b>	<b>2,034,118</b>	<b>2,640,521</b>	<b>(110,712)</b>	<b>(103,854)</b>

**Ծանոթագրություն 6. Չվաստակաձ ապահովագրավճարի պահուստի փոփոխություն**

Ապահովագրության դասեր	Համախառն փոփոխություն		Վերաապահովագրողների մասնաբաժնում փոփոխություն	
	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	4,538	2,029	8	(196)
Առողջության ապահովագրություն	(353,575)	(668,556)		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(2,729)	(16,381)	(1,135)	7,373
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	7,463	(1,843)	(6,332)	958

Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	22,060	(27,059)	11,143	(899)
Ավտո պատասխանատվություն	(1,729)	(496)	(198)	118
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	4,145	18,891	2,483	(3,896)
Ֆինանսական վնասների ապահովագրություն	1,224	170		
Աջակցության ապահովագրություն	2,316	2,026		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	183,371	(175,444)		
<b>Ընդամենը</b>	<b>(132,916)</b>	<b>(866,663)</b>	<b>5,969</b>	<b>3,458</b>

**Ծանոթագրություն 7 . Փոփոխություններ տեխնիկական պահուստներում**

Ապահովագրության դասեր	Համախառն փոփոխություն		Վերաապահովագրողների մասնաբաժնի փոփոխություն	
	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(1,388)	2,093		
Առողջության ապահովագրություն	(18,631)	(31,976)		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(1,645)	(4,941)	228	1,264
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(12)	(51)		49
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	1,310	(78)	(79)	64
Ավտո պատասխանատվություն		188		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	5,077	(5,272)	145	18
Ֆինանսական վնասների ապահովագրություն				
Աջակցության ապահովագրություն	(1,132)	(1,951)		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	52,099	(9,095)		
<b>Ընդամենը</b>	<b>35,678</b>	<b>(51,083)</b>	<b>294</b>	<b>1,395</b>

**Ծանոթագրություն 8. Ներդրումային եկամուտ**

Ներդրումային եկամտի աղբյուրը	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ
Բանկերում ներդրված ավանդների, նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով	74,891	65,352
ՀՀ ոչ պետական արժեթղթերից	5,096	6,130
ՀՀ Պետական արժեթղթերից	7,050	
Տրամադրված փոխառություններից	108	249
Այլ ներդրումներից	3,427	(218)
<b>Ընդամենը</b>	<b>90,572</b>	<b>71,513</b>

**Ծանոթագրություն 9. Եկամուտներ միջնորդավճարներից**

Ապահովագրության դաս	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	258	173
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն		
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	17,038	19,110
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	2,240	4,751
Ավտո պատասխանատվություն		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	2,348	122
Ֆինանսական վնասների ապահովագրություն		1,091
<b>Ընդամենը</b>	<b>21,884</b>	<b>25,247</b>

**Ծանոթագրություն 10. Այլ գործառնական եկամուտ**

Հաշվեզրած եկամտի տեսակ	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ
Սուբրոգացիայի կիրառումից եկամուտ	47,919	57,896
Եկամուտներ ուղիղ հատուցումներից	60,605	2,475
Այլ գործառնական եկամուտ	691	1,810
Դադարեցման հետևանքով ստացվելիք վերաապահովագրավճարներ	696	53,970
<b>Ընդամենը</b>	<b>109,911</b>	<b>116,151</b>

**Ծանոթագրություն 11. Այլ եկամուտ**

Հաշվեզրած եկամտի տեսակ	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ

**Ծանոթագրություն 12. Ջուտ հատուցումներ**

Ապահովագրության դասեր, որոնց գծով վճարվել են հատուցումներ	Համախառն հատուցումներ		Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ	
	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(71)	(119)		
Առողջության ապահովագրություն	(249,946)	(254,993)		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(43,927)	(46,709)	21,750	23,052
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(240)			
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(2,074)	(133)	595	
Ավտո պատասխանատվություն		(168)		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	(50)	(101,598)	48	49
Ֆինանսական վնասների ապահովագրություն				
Աջակցության ապահովագրություն	(1,617)	(1,180)		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր	(804,505)	(696,085)		
<b>Ընդամենը</b>	<b>(1,102,430)</b>	<b>(1,100,985)</b>	<b>22,393</b>	<b>23,101</b>

**Ծանոթագրություն 13. Չեռքերման ծախսեր**

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ
Առաջնային միջնորդավճար	(332,789)	(293,127)
Երկրորդային միջնորդավճար	(761)	(1,200)
<b>Ընդամենը</b>	<b>(333,550)</b>	<b>(294,327)</b>

**Ծանոթագրություն 14. Այլ գործառնական և վարչական ծախսեր**

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	31.03.2019թ դրությամբ	31.03.2018թ դրությամբ
Դադարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող ապահովագրավճարներ, ներառյալ հետ վերադարձվող ցեղենտի միջնորդավճարը	(65,213)	(77,778)
Վնասների կարգավորման և այլ ծախսեր	(80,418)	(90,849)
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ , արձակուրդային պահուստի ձևավորման ծախս	(162,121)	(156,983)
Մոցիայական ապահովագրության գծով ծախսեր	(81)	(118)
Գործուղման ծախսեր	(524)	(93)
<i>Ուսուցման ծախսեր</i>	(155)	

Հիմնական միջոցների վարձակալության գծով ծախսեր	(20,010)	(39,631)
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	(5,500)	(6,431)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(14,303)	(14,120)
Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(3,364)	(4,434)
Սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(1,045)	(1,402)
Շենքի վերանորոգում, սպասարկում		(167)
<i>Կապ և հեռահաղորդակցություն</i>	(4,038)	(4,056)
Գրասենյակային, տնտեսական, չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և այլն	(17,136)	(14,883)
ASWA	(33,655)	(39,275)
Տոկոսային ծախսեր	(13,770)	(6,411)
<b>Ընդամենը</b>	<b>(421,333)</b>	<b>(456,631)</b>

**Ծանոթագրություն 15. Այլ ծախսեր**

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	31.03.2019թ. դրությամբ	31.03.2018թ. դրությամբ
Գովազդի գծով ծախսեր	(7,648)	(9,108)
Ներկայացուցչական ծախսեր	(3,055)	(3,740)
Անդամավճարներ, բարեգործություն	(14,442)	(43,646)
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվներ մաշվածություն	(15,871)	(11,604)
Տուգանքներ և այլ ծախսեր	(3)	
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների իրացումից զուտ ծախս, արժեզրկումից կարուստ		
Ֆինանսական ակտիվների օտարումից զուտ ծախս	(63)	(49)
<b>Ընդամենը</b>	<b>(41,082)</b>	<b>(68,147)</b>

**Ծանոթագրություն 16. Ծախսեր կապված շահութահարկի հետ.**

Շահութահարկի գծով ծախսի /եկամտի/ խոշոր բաղադրիչներ	Ծախսի մեծությունը	
	31.03.2019թ. դրությամբ	31.03.2018թ. դրությամբ
Ընթացիկ հարկի գծով ծախս	(29,000)	
Հետաձգված հարկի գծով ծախս/ փոխհատուցում/	597	2,321
<b>Ընդամենը</b>	<b>(28,403)</b>	<b>2,321</b>

**Ծանոթագրություն 17. Հետաձգված ձեռքբերման ծախսեր և ապագա ժամանակաշրջանի ծախսեր**

	31.03.2019թ. դրությամբ	31.12.2018թ. դրությամբ
Հետաձգված ձեռքբերման ծախսեր գործող ապահովագրության պայմանագրերի գծով	491,827	595,669
Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ուժի մեջ մտնող ապահովագրության պայմանագրերի գծով միջնորդավճարների ծախսեր	3,917	40,514
Այլ Հետաձգված ձեռքբերման ծախսեր	177	177
<b>Ընդամենը</b>	<b>495,921</b>	<b>636,360</b>

**Ծանոթագրություն 18. Հիմնական միջոցներ**

	Շենքեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն. միջոց. գծով կապիտալ ներդր.	Վարձ. հիմն. միջոց. գծով կապիտալ ներդր.	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	398,172	142,940	35,400	157,185			733,698
Ավելացում		23,586	21,335	9,276			54,197
Օտարում			(1,000)				(1,000)

Վերագնահատում*						
Արժեզրկում						
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	<b>398,172</b>	<b>166,526</b>	<b>55,735</b>	<b>166,461</b>		<b>786,894</b>
Ավելացում		9,383		7,724		17,107
Օտարում						
Վերագնահատում*						
Արժեզրկում						
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>398,172</b>	<b>175,909</b>	<b>55,735</b>	<b>174,185</b>		<b>804,001</b>

*Կուտակված մաշվածություն*

<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին</b>	<b>130,582</b>	<b>135,324</b>	<b>0</b>	<b>145,102</b>		<b>411,008</b>
Ավելացում	19,916	12,626	8,825	6,413		47,780
Օտարում			(17)			(17)
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում						
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	<b>150,498</b>	<b>147,950</b>	<b>8,808</b>	<b>151,515</b>		<b>458,771</b>
Ավելացում	4,979	4,159	2,796	1,684		13,618
Օտարում						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում						
<b>Մնացորդը հաշվետու ամանակաշրջանի վերջին</b>	<b>155,477</b>	<b>152,109</b>	<b>11,604</b>	<b>153,199</b>		<b>472,399</b>

*Չուտ հաշվեկշռային արժեք*

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	242,695	23,800	44,131	20,986		331,612
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	247,674	18,576	46,927	14,946		328,123

**Ծանոթագրություն 19. Վաճառքի համար պահվող հիմնական միջոցներ**

<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	<b>234,000</b>					<b>234,000</b>
Վերագնահատում*	-					-
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>234,000</b>					<b>234,000</b>

**Ծանոթագրություն 20. Ոչ նյութական ակտիվներ**

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալները.	Ընդամենը
--	-----------------------	--------------------------	-------------------------	---------------------------	---------------------------------------	----------

*Սկզբնական արժեք*

<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին</b>	<b>31,318</b>			<b>8,395</b>		<b>39,713</b>
Ավելացում	19,102					19,102
Օտարում						
Արժեզրկում						
Վերագնահատում						
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	<b>50,420</b>			<b>8,395</b>		<b>58,815</b>
Ավելացում	1,400					1,400
Օտարում						
Վերագնահատում						
Արժեզրկում						



Վերագնահատումից մաշվածության ճգրտում					
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>51,820</b>			<b>8,395</b>	<b>60,215</b>

*Կուտակված մաշվածություն*

<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին</b>	<b>21,113</b>			<b>8,115</b>	<b>29,228</b>
Ավելացում	3,683			83	3,766
Օտարում					
Արժեզրկում					
Վերագնահատում					
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	<b>24,796</b>			<b>8,198</b>	<b>32,994</b>
Ավելացում	2,039			21	2,060
Օտարում					
Վերագնահատում					
Արժեզրկում					
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում					
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>26,835</b>			<b>8,219</b>	<b>35,054</b>

*Չուտ հաշվեկշռային արժեք*

<b>Հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>24,985</b>			<b>176</b>	<b>25,161</b>
<b>Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>25,624</b>			<b>197</b>	<b>25,821</b>

**Ծանոթագրություն 21. Այլ ներդրումներ**

	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի անվանական արժեթղթեր	525,136	0
Փայամասնակցություն ներդրումային խումբում	369,592	366,214
<b>Ընդամենը</b>	<b>894,728</b>	<b>366,214</b>

**Ծանոթագրություն 22. Դեբիտորական պարտքեր**

	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
Այլ պարտքեր	2,303	100
Հնարավոր կորուստների պահուստ		(12)
<b>Ընդամենը</b>	<b>2,303</b>	<b>88</b>

**Ծանոթագրություն 23. Տրված կանխավճարներ**

<b>Ֆինանսական ակտիվի կատեգորիա</b>	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
Հատուցումների գծով	43,338	48,390
Գործակալներին տրված կանխավճարներ	106,504	117,987
Կանխավճարներ աշխատավարձի գծով	8,250	2,119
Այլ կանխավճարներ	45,237	46,419
Հնարավոր կորուստների պահուստ	(15,639)	(15,640)
<b>Կանխավճարներ բյուջեին</b>	<b>112,954</b>	<b>87,651</b>
<b>Ընդամենը</b>	<b>300,644</b>	<b>286,926</b>

**Ծանոթագրություն 24. Պահանջներ բանկերի նկատմամբ**

<b>Ակտիվ</b>	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
--------------	--------------------------	--------------------------

Ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ ավանդներ	3,015,250	3,282,650
Ավանդների գծով հաշվեգրված տոկոսների մնացորդ	150,838	111,297
Բանկի արժեկտրոնային պարտատոմս		207,154
<b>Ընդամենը</b>	<b>3,166,088</b>	<b>3,601,101</b>

**Ծանոթագրություն 25. Տրամադրված փոխառություններ**

	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառություններ		
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ		
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ	22,162	3,567
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ ի գծով ստացվելիք տոկոսներ	56	13
Հնարավոր կորուստների պահուստ	(308)	(150)
<b>Ընդամենը</b>	<b>21,910</b>	<b>3,430</b>

**Ծանոթագրություն 26. Վերաապահովագրական ակտիվներ**

	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
ՉԱՊ	124,601	118,632
ՆՉՊՊ	11,680	11,386
Վերաապահովագրողից ստացվելիք միջնորդավճար	21,855	
Վերաապահովագրողից ստացվելիք հատուցումներ	22,375	11,506
Դադարեցված պայմանագրերի գծով և վերաապահովագրողներից ստացվելիք այլ գումարներ	683	78
Հնարավոր կորուստների պահուստ		
<b>Ընդամենը</b>	<b>181,194</b>	<b>141,602</b>

**Ծանոթագրություն 27. Հետաձգված հարկային ակտիվ**

Ընկերությունը հաշվեկշռում ճանաչել է **13,138 հազար դրամ** հետաձգված հարկային ակտիվ, որն առաջացել է աշխատակիցների հատուցումների գծով ձևավորված պարտավորությունների, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային և հարկային բազայի տարբերությունից:

**Ծանոթագրություն 28. Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ**

	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
Ապահովադիրներից ստացվելիք ապահովագրաճարներ	1,383,580	975,276
Ապահովագրական գործակալներից ստացվելիք ապահովագրաճարներ	287,510	358,852
Ապահովագրական գործակալներից ստացվելիք այլ գումարներ		
Մուբրոգացիայի հետևանքով առաջացած պարտքեր	69,840	68,962
Ապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարներ	118,042	54,367
Դեբիտորական պարտքեր հատուցումների գծով		
Հնարավոր կորուստների պահուստ	(137,386)	(69,964)
<b>Ընդամենը</b>	<b>1,721,586</b>	<b>1,387,493</b>

**Ծանոթագրություն 29. Դրամական միջոցներ և համարժեքներ**

	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
Կանխիկ դրամ դրամարկղում	4,986	6,165
Դրամական միջոցներ ճանապարհին		12,500
Բանկային հաշիվներ բանկերում	137,162	99,108
<b>Ընդամենը դրամական միջոցներ</b>	<b>142,148</b>	<b>117,773</b>

**Ծանոթագրություն 30. Այլ ակտիվներ**

	31.03.2019թ	31.12.2018թ
--	-------------	-------------

	դրությամբ	դրությամբ
Խիստ հաշվառման բլանկներ,	1350	1,351
վառելիք,	840	1,174
պաշարներ	2,035	111
Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	3,159	3,351
<b>Ընդամենը</b>	<b>7,384</b>	<b>5,987</b>

**Ծանոթագրություն 31. Չվաստակաժ ապահովագրավճարի պահուստ**

Ապահովագրության դաս	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	74,876	79,414
Առողջության ապահովագրություն	1,086,655	733,080
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	184,094	181,365
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	19,069	26,532
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	147,790	169,850
Ավտո պատասխանատվություն	4,852	3,123
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	46,765	50,910
Ֆինանսական վնասների ապահովագրություն	639	1,863
Աջակցության ապահովագրություն	10,870	13,186
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	1,561,108	1,744,478
<b>Ընդամենը</b>	<b>3,136,718</b>	<b>3,003,801</b>

**Ծանոթագրություն 32. Պահանջների պահուստ**

Ապահովագրության դաս	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	3,388	2,001
Առողջության ապահովագրություն	355,315	336,683
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	29,732	28,087
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	952	940
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	849	2,159
Ավտո պատասխանատվություն		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	471	5,549
Ֆինանսական վնասների ապահովագրություն		
Աջակցության ապահովագրություն	8,981	7,849
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	162,689	214,786
<b>Ընդամենը</b>	<b>562,377</b>	<b>598,054</b>

**Ծանոթագրություն 33. Այլ ապահովագրական պահուստներ**


**Ծանոթագրություն 34. Ապահովագրական պայմանագրերի գծով պարտավորություններ**

Պարտավորության աղբյուր	31.03.2019թ դրությամբ	31.12.2018թ դրությամբ
Հատուցումների գծով վճարվելիք գումարներ	105,540	176,400
Միջնորդներին վճարվելիք գումարներ	46,075	100,670
Ռեզիդենտ ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ	22,131	16,684
Վճարվելիք գումարներ ուղիղ հատուցումների գծով		24,805

<b>Ընդամենը</b>	<b>173,746</b>	<b>318,559</b>
-----------------	----------------	----------------

**Ծանոթագրություն 35. Կրեդիտորական պարտավորություններ վերաապահովագրության գծով**

<b>Պարտավորություն ըստ դասերի</b>	<b>31.03.2019թ դրությամբ</b>	<b>31.12.2018թ դրությամբ</b>
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	645	
Ցամաքային տրանսպորտ	22,208	918
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	43,681	491
Ավտոմեք. պատասխանատվություն		
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	38,200	5,078
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	8,584	46
Ֆինանսական վնասների ապահովագրություն		
Միջնորդներին վճարվելիք գումարներ	323	187
<b>Ընդամենը</b>	<b>113,641</b>	<b>6,720</b>

**Ծանոթագրություն 36. Ապահովագրության գծով ստացված գումարներ**

<b>Պարտավորության աղբյուր</b>	<b>31.03.2019թ դրությամբ</b>	<b>31.12.2018թ դրությամբ</b>
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ կնքված ապահովագրության պայմանագրերի գծով	25,550	161,728
Ապահովագրության գծով գործակալներից ստացված կանխավճարներ	584	562
<b>Ընդամենը</b>	<b>26,134</b>	<b>162,290</b>

**Ծանոթագրություն 37. Այլ պարտավորություններ**

<b>Պարտավորության աղբյուր</b>	<b>31.03.2019թ դրությամբ</b>	<b>31.12.2018թ դրությամբ</b>
Աշխատավարձ, հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	63,766	61,980
Պարտավորություններ բյուջեի նկատմամբ	45,635	16,968
Ապահովագրողների բյուրոյի նկատմամբ	5,107	22,176
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների և ապրանքների դիմաց	24,190	40,230
Ստացված կանխավճարներ և այլ պարտավորություններ	8,705	10,145
<b>Ընդամենը</b>	<b>147,403</b>	<b>151,499</b>

**Ծանոթագրություն 38. Ներգրավված վարկեր**

	<b>31.03.2019թ դրությամբ</b>	<b>31.12.2018թ դրությամբ</b>
Ռեզիդենտ Բանկերից ստացված ընթացիկ վարկերի մնացորդ	275,000	350,000
Ռեզիդենտ Բանկերից ստացված ընթացիկ վարկերի գծով տոկոսների մնացորդ	20,629	19,660
Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր	416,622	
Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի	297	
<b>Ընդամենը</b>	<b>712,548</b>	<b>369,660</b>

**Ծանոթագրություն 39. Կապիտալ**

31.03.2019թ.-ի դրությամբ Ընկերության հայտարարված և վճարված կանոնադրական կապիտալը կազմում է **1 790 000 հազար ՀՀ դրամ**:

Գործադիր տնօրեն

Հովհաննես Գևորգյան

Գլխավոր հաշվապահ՝

Նադեժդա Գասպարյան